Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
հոկտեմբերի 1-ի N 1290 - Ա
որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Անվտանգության խորհրդի քարտուղարն Անվտանգության խորհրդի որոշումների կատարման մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է Անվտանգության խորհուրդ և Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ Անվտանգության խորհրդի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված ժամկետներում:

2. Անվտանգության խորհրդի որոշումների կատարման մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն կազմելու նպատակով Անվտանգության խորհրդի քարտուղարը համապատասխան հարցումներ է ուղարկում գործադիր իշխանության մարմիններին՝ փաստաթղթեր, նյութեր, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում տեղում կատարելով մշտադիտարկում:

3. Անվտանգության խորհրդի որոշումների կատարման մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը պետք է տվյալներ ներառի մշտադիտարկման իրականացման ժամկետների, Անվտանգության խորհրդի մշտադիտարկված որոշումների, դրանց կատարմամբ ակնկալվող արդյունքների, Անվտանգության խորհրդի որոշումների իրականացման համար պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, Անվտանգության խորհրդի որոշումների կատարման ընթացքի և այդ ընթացքում ի հայտ եկած խնդիրների, Անվտանգության խորհրդի որոշումների

կատարման իրականացվածության ու առարկայական արդյունքների, մշտադիտարկման արդյունքներով մշակված առաջարկությունների վերաբերյալ:

4. Անվտանգության խորհրդի որոշումների կատարման մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվությանը կարող են կցվել մշտադիտարկման ընթացքում գործադիր իշխանության մարմիններից ստացված նյութերն ու փաստաթղթերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ